

"ՀԱՅԱՑՔ"-Ը ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է. Ի՞նչ ակնկալել Սոցիի հանդիպումից

Ներկայացնում ենք “Արմեդիա” ՏՎԳ հարցազրույցը “Հայացք” կիրառական քաղաքականության և հետազոտությունների վերլուծական կենտրոնի փորձագետ Լիանա Հովհաննիսյանի հետ:



-Ինչպես գիտենք, հայ-ադրբեջանական սահմանին իրավիճակը չափազանց լարված է: Բաքուն, կարծես՝ անում է ամեն ինչ իրավիճակն էլ ավելի սրելու, նորանոր սադրանքներով իրավիճակն առավել լարելու նպատակով, դրա սպագույցներից է Տավուշի բնակիչ, գերեվարված Կարեն Պետրոսյանի սպանությունը: Այս պայմաններում ի՞նչ կարելի է ակնկալել Սոցիի առաջիկա հանդիպումից: Ընդհանրապես Ձեր կարծիքով, տեղի կունենա՞ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների անմիջական հանդիպում, թե՞ ոչ:

Դեռևս դժվար է ասել, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների անմիջական հանդիպում Սոցիում տեղի կունենա, թե՞ ոչ: Թերևս ամեն ինչ կախված է լինելու դրան նախորդող Սարգսյան-Պուտին, Ալիև-Պուտին հանդիպումների ընթացքից և արդյունքներից: Մի բան ակնհայտ է, որ նման պայմաններում կարգավորման գործընթացի, դրա որևէ տարրի շուրջ զրույցն անիմաստ է: Հանդիպումների ընթացքում ջանքերը հիմնականում ուղղված են լինելու ներկա լարվածությունը թուլացնելուն, իրավիճակը քիչ թե շատ խաղաղ հուն տեղափոխելուն, որից հետո հնարավոր է՝ կրկին խաղաղ գործընթացը շարունակելու, կարգավորման շուրջ բանակցություններն առաջ մղելու հնարավորություն առաջանա:

Բնականաբար՝ հակամարտության քաղաքական կարգավորմանն ուղղված ջանքերը չեն կարող արդյունավետ լինել, երբ սահմաններին շարունակվում են կրակոցները, երբ Ադրբեջանի հակահայկական ագրեսիվ քաղաքականությունը հասել է իր զարգացման գագաթնակետին: Պատճառը շատ պարզ է. ինչպե՞ս կարելի է խոսել բանակցային սեղանին հակամարտության քաղաքական լուծման հնարավոր հաջողությունների մասին, երբ կողմերի միջև փոխվստահության մակարդակը հավասար է զրոյի: Միջնորդների, այս դեպքում՝ մասնավորապես ՌԴ նախագահի ջանքերն այժմ ուղղված

պիտի լինեն ադրբեջանական կողմի՝ իրավիճակի ապակայունացման համառ ջանքերը զսպելուն. թե որքանով դա կհաջողվի անել և ինչ պայմաններով՝ դժվար է ասել:

-Ամեն դեպքում, այս ամենն ինչպե՞ս կարող է անդրադառնալ քաղաքական կարգավորման բանակցությունների վրա: Արդյո՞ք ստեղծված իրավիճակը միջազգային հանրությանն ու միջնորդներին չի հուշելու, որ նույն Մադրիդյան սկզբունքներն այլևս արդիական չեն. ինչպե՞ս կարելի է խոսել որևէ զիջման կամ փոխզիջման մասին այս պարագայում:

Բանակցային գործընթացն այն է, ինչ փոխարինում է պատերազմին: Բաքվի գործողություններն այսօր ակնհայտորեն ուղղված են այդ գործընթացը տապալելուն, և այսօր նա բավականին մոտ է դա հաջողելուն: Սոչիի առաջիկա հանդիպումը ուղղված է լինելու հենց խաղաղ բանակցությունների ձևաչափի պահպանմանն ու դրանց շարունակականության ապահովմանը:

Իհարկե, վերջին իրադարձությունները միջազգային ողջ հանրության ու հակամարտության կարգավորման միջնորդների համար ակնհայտ են դարձնում Ադրբեջանի վայրագությունը: Հակահայկականությունն այստեղ պետական քաղաքականություն է: Ալիևն, ըստ էության, պատերազմ է հայտարարել մեզ, եթե հենվենք հարևան երկրի ղեկավարի *TWITTER*-յան գրառումների վրա: Նման պարագայում, հասկանալի է՝ որևէ զիջման կամ փոխզիջման շուրջ որևէ խոսակցություն պարզապես անհեթեթ է: Կարծում եմ՝ դա բավականին հստակ գիտակցում են նաև կարգավորման միջնորդները: Ամեն դեպքում մեր ջանքերն ուղղված պիտի լինեն վերջիններիս համար այդ ամենն ակնհայտ և հստակ դարձնելուն:

Ադրբեջանի իշխանությունների ռազմատենչ կեցվածքը և փաստացի պատերազմական գործողություններ սադրելն անհնար են դարձնում հայկական կողմի որևէ զիջում բանակցային սեղանին: Հայկական կողմերը վստահ են, որ ստեղծված իրավիճակում ցանկացած զիջում մեկ քայլ մոտեցնելու է հակամարտության էլ ավելի սրմանը: Այս պարագայում Ադրբեջանի Հանրապետությունում հակահայկականության ցանկացած դրսևորում իր արձագանքն է գտնելու բանակցային սեղանին և դրանից դուրս: Միաժամանակ, սակայն, այս ամենը չի նշանակում, թե մենք հրաժարվել կամ հրաժարվելու ենք խաղաղ կարգավորման միջնորդական նախաձեռնություններից, այդ շրջանակներում՝ նրանց առաջարկներից: Կարևոր է ընկալել՝ հայկական կողմերը սկզբունքորեն դեմ չեն միջնորդների երկարատև ջանքերով մշակված և կողմերին ներկայացված կարգավորման սկզբունքներից, որոնք կարող են հետագա պայմանավորվածությունների համար որոշակի հիմք հանդիսանալ և հարատև խաղաղություն ապահովել: Բայց այդ պայմանավորվածությունները կարող են ձեռք բերվել, առավել ևս՝ իրականություն դառնալ միայն այն պարագայում, եթե էական փոփոխություններ գրանցվեն մեր հակառակորդի տրամադրություններում, եթե Ադրբեջանում և՛ քաղաքական հռետորաբանությունը, և՛ քաղաքական վարնախավի ու հասարակության տրամադրությունները թույլ տան մեզ վստահ լինել, որմենք

ցանկացած փոխզիջման պարագայում կարող ենք ապահով և անվտանգ ապրել մեր հայրենիքում: Ցավոք՝ այսօր փաստերը վկայում են, որ դա դեռևս անհնար է:

*Աղբյուրը՝ Armedia.am
08.08.2014*